



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Խորհրդի նախագահի ուղերձը	4
2. Վարչության նախագահի ուղերձը	6
3. Հայաստանի բանկային համակարգը	8
4. Դեկվարության հաշվետվությունը	9
4.1 Բանկի առաքելությունն ու արժեքները	9
4.2 2015 թվականի կարևոր իրադարձությունները	11
4.3 Առանցքային ֆինանսական ցուցանիշները	12
4.4 Մանրածախ բիվնես	18
4.5 Կորպորատիվ բիվնես	22
4.6 Ռիսկերի կառավարում	25
4.8 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	31
4.9 Մասնաձյուղային ցանց	33
5. Բանկի ռազմավարությունը	34
6. Կորպորատիվ կառավարում	37
6.1. Կորպորատիվ կառավարման համակարգ	37
6.2. Տեղեկատվություն բաժնետերերի համար	38
7. Ներդրողների և միջազգային կառույցների հետ աշխատանք	43
8. Ներքին հսկողություն և աուդիտ	44
9. Անձնակազմի կառավարում և կադրային քաղաքականություն	47
10. Մեր թիմը	49
11. Ֆինանսական հաշվետվություններ	52
12. Կոնտակտային տվյալներ	60



**ՎԱԳԻԿ ԶԱՔՐՅԱՆ**

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի նախագահ

Հարգելի հաճախորդներ,  
բաժնետերեր և գործընկերներ,

2015 թվականը Յունիբանկ ԲԲԸ-ի համար դարձավ լուրջ և որակյալ վերափոխումների տարի և ուղենշեց բանկի հետագա զարգացման միտումներն ու սկզբունքերը: Ընդունվեց որոշում փոխել բանկի կազմակերպարարական ձևը, վերակազմավորել այն որպես բաց բաժնետիրական ընկերություն և իրականացնել անհատական ներդրողների լայն շրջանակին ուղղված բաժնետոմսերի առաջնային տեղաբաշխում:

Այսօր Յունիբանկ ԲԲԸ-ն առաջին բանկն է Հայաստանում, որը նախնական հրապարակային առաջարկի (IPO) միջոցով իրականացրեց բաժնետոմսերի տեղաբաշխում «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-ում և ցուցակեց դրանք բորսայի B հարթակում: Բանկի բաժնետոմսերի ազատ շրջանառվող մասը նվազագույնը կազմում է 10%:

Բաց բաժնետիրական ընկերության վերակազմավորվելու մասին բանկի որոշումը պայմանավորված է զարգացման որակապես նոր մակարդակ ապահովելու և միջազգային շուկա մուտք գործելու ռազմավարությամբ և համապատասխանում է համաշխարհային տնտեսության զարգացման միտումներին: Գործընթացը կնպաստի բանկի աշխատանքի թափանցիկության և կորպորատիվ կառավարման մակարդակի բարձրացմանը:

«Յունիբանկը» միշտ քայլել է ժամանակին համահունչ և հա-

մապատասխանել համաշխարհային միտումներին: IPO-ն բանկի զարգացման որակապես նոր փուլ է, և այսօր մենք ապահովել ենք գործունեության արդյունավետության այնպիսի մակարդակ, երբ վերակազմավորումը հանրային բանկի մեզ համար դարձել է անհրաժեշտություն: Բանկի բաժնետոմսերի ընթացիկ գինը NASDAQ OMX Armenia-ում գործունեության արդյունավետության, իրական շուկայական արժեքի և ներդրումային գրավչության որոշման հավաստի ցուցիչ է: Արդեն այս տարվա ապրիլին Յունիբանկը լրացուցիչ թողարկեց և բորսայում ամբողջությամբ տեղաբաշխեց 5.2 մլրդ ՀՀ դրամի բաժնետոմսեր:

Հաշվի առնելով ներդրողների հետաքրքրությունը բանկի հանդեպ, նախատեսվում է իրականացնել բաժնետոմսերի նոր թողարկում և դիտարկել նաև ինստիտուցիոնալ ներդրողներ ներգրավելու հնարավորությունները, ինչը կնպաստի բանկի հեղինակության, գործունեության թափանցիկության բարձրացմանը և կորպորատիվ կառավարման համակարգի բարելավմանը:

2015 թվականը Հայաստանի տնտեսության համար այնքան էլ բարենպաստ չէր, ինչն իր ազդեցությունն ունեցավ բոլոր ոլորտների վրա: Սակայն, ՀՀ բանկային համակարգը շարունակեց աճ արձանագրել ինչպես ֆինանսական ցուցանիշների գծով, այնպես էլ՝ վստահության մակարդակի առումով:

Յունիբանկը կարողացավ ժամանակին և արդյունավետ կերպով արձագանքել նոր մարտահրավերներին և շուկայի փոփոխություններին: Հավասարակշռված քաղաքականության շնորհիվ բանկն՝ ի շահ հաճախորդների և բաժնետերերի, դրական ֆինանսական արդյունքներ ապահովեց գործունեության բոլոր հիմնական ուղղությունների գծով, ինչը մեկ անգամ ևս փաստում է ընտրված ռազմավարության և կառավարման մոդելի արդյունավետությունը:

2008-ից մինչև 2015 թվականը Յունիբանկի ակտիվներն աճել են 231%-ով, կապիտալը՝ 251%-ով, իսկ վարկային ներդրումները՝ 240%-ով: 2015 թվականի վերջին բանկի ակտիվները կազմել են մոտ 158 մլրդ դրամ, պարտավորությունները՝ 135 մլրդ դրամ, բանկի կապիտալը՝ 22.7 մլրդ դրամ: Բանկն ապահովել է 358 մլն դրամի շահույթ և շարունակել ցուցադրել աճի դրական դինամիկա:

Բանկի Խորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագրով 2020 թվականին նախատեսվում է ապահովել 5 մլրդ դրամի շահույթ և դրան համապատասխան՝ շահութաբաժինների աճ: Յունիբանկն ամուր դիրքեր ունի շուկայում, այդ թվում նաև ման-

րածախ բիզնեսի գծով, որը ժամանակակից բանկային գործի համար հիմնական, դինամիկ զարգացող ուղղությունն է: Մենք շարունակում ենք նաև ակտիվ աջակցություն տրամադրել փոքր և միջին ձեռնարկություններին, որոնք ձևավորում են մեր տնտեսության հիմքը: Վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման արդյունքում, բանկի ընդհանուր պորտֆելում մանրածախ վարկերի մասնաբաժինը կազմում է 52%, ՓՄՁ-ներինը՝ 28%, իսկ կորպորատիվ վարկերինը՝ 20%: 2015 թվականի տվյալներով, սպառողական վարկավորման գծով բանկի մասնաբաժինը շուկայում կազմում է ավելի քան 9%, ՓՄՁ-ների վարկավորման գծով՝ 5%: Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալով, հաշվետու ժամանակաշրջանում, Յունիբանկը ՀՀ բանկային համակարգում զբաղեցրել է 5-րդ տեղը:

Յունիբանկը համոզված է նաև դրամական փոխանցումների «Յունիստրի» միջազգային համակարգի ռազմավարական գործընկերը: Հաշվետու տարում բանկն իրականացրել է ավելի քան 309 000 դրամական փոխանցում:

2015 թվականի հիմնական խնդիրներն են եղել արդյունավետության բարձրացումը, ծախսերի օպտիմալացումը և ռիսկերի կառավարման գործառնությունների ուժեղացումը: Բանկն առանձնակի ուշադրություն է հատկացրել հաճախորդային բազայի դիվերսիֆիկացմանը, վարկային պորտֆելի որակի և սպասարկման օպերատիվության բարձրացմանը, IT-համակարգերի կարգազցմանը և ինտելեկտուալ լուծումների ներդրմանը:

Մեծ աշխատանք է տարվել բանկի ծառայությունների և գործիքների տեսականու ընդլայնման և բարելավման ուղղությամբ՝ հաշի առնելով հաճախորդների պահանջմունքներն ու առանձնահատկությունները:

2015 թվականին քայլեր են ձեռնարկվել նաև բիզնես գործընթացների օպտիմալացման և լայն մասնաձյուղային ցանցի վերակազմավորման ուղղությամբ: Այսօր Յունիբանկը ներկայացված է 45 մասնաձյուղերով և 54 պրոմո կետերով: Բանկը հաջողությամբ համագործակցում է ավելի քան 1 000 առևտրի և սպասարկման կետերի հետ:

Պլաններում է նաև VIP-սպասարկման հետագա զարգացումը: Այս տարվա հունիսին նախատեսում ենք նոր, ժամանակակից մասնաձյուղ բացել Երևանի կենտրոնում՝ Unibank Prive-ի հաճախորդների սպասարկումը բարձր որակով ապահովելու համար:

Մենք շեշտակի ընդլայնել ենք նաև միջազգային համագործակցությունը և վարկային ծրագրերի շրջանակներում ակտի-

վորեն աշխատում ենք Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC), Առևտրի և զարգացման Սևծովյան բանկի (BSTDB), Եվրոպական ներդրումային բանկի հետ: Յունիբանկի վարկային ծրագրերի նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերում նաև մասնավոր եվրոպական ֆոնդերը:

Առանձնակի ուշադրություն է ցուցաբերվում է նաև բիզնեսի թափանցիկության բարձրացմանը և կորպորատիվ կառավարման կատարելագործմանը, ապահովելով արդյունավետ և սերտ փոխգործողություն կառավարման բոլոր օղակների և կառուցվածքային ստորաբաժանումների միջև, կորպորատիվ էթիկայի սկզբունքների պահպանմամբ:

2015 թվականին բանկը հաստատեց իր դիրքորոշումը՝ զարգացնելու կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ուղղությունը, ջանքերը ուղղելով տնտեսական բարենպաստ միջավայրի, ենթակառուցվածքների և նոր աշխատատեղերի ստեղծմանը: Հաշվետու տարում բանկն ակտիվ մասնակցություն է ունեցել հովանավորչական, բարեգործական և սոցիալական ծրագրերում, որոնք ուղղված էին ֆինանսական գրագիտության բարձրացմանը, կրթության, արվեստի, սպորտի ոլորտների աջակցմանը: Ինչպես վկայում են հարցումները, ապրանքանիշի ծանաչվածությամբ Յունիբանկը հայկական բանկերի առաջատար եռյակում է:

2015 թվականին «ՄԵՐԿՈՒՐԻ» ամենամյա մրցանակաբաշխությանը Յունիբանկը ծանաչվեց լավագույնը Հայաստանի «Ժողովրդական բանկ» անվանակարգում:

Անփոփելի խոսքս, ուզում են շնորհակալություն հայտնել բանկի հաճախորդներին, ներդրողներին և գործընկերներին՝ վստահության, աջակցության և գործնական հուսալիության համար: Մենք անհրաժեշտ բոլոր ջանքերը կներդնենք, որպեսզի համագործակցությունը շարունակվի և հիմնված լինի փոխադարձ հարգանքի, վստահության և հաջողության ձգտման վրա:

Բանկի Խորհրդի անունից մեր երախտագիտությունն են հայտնում նաև Յունիբանկի անձնակազմին՝ պրոֆեսիոնալ աշխատանքի և բանկի զարգացման գործում նշանակալի ավանդի համար:

Յունիբանկը կշարունակի իր ֆինանսական քաղաքականությունը կառուցել ելնելով հաճախորդների և բաժնետերերի շահերից՝ հետագայում ևս մնալով Հայաստանի ամենապահանջված ֆինանսական հաստատություններից մեկը և ներդրողների համար ապահովելով հնարավոր առավելագույն շահույթը:



**ՎԱՐԴԱՆ ԱՅՅՅԱՆ**  
«Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության Նախագահ

հասանելիության և գործունեության թափանցիկության ապահովմանը:

Երկրի ֆինանսական շուկայի համար Յունիբանկի IPO-ն դարձավ 2015 թվականի գլխավոր իրադարձություններից մեկը: Իրականացնելով արժեթղթերի առաջնային տեղաբաշխում և արդեն ընթացիկ տարում տեղաբաշխելով բաժնետոմսերի նոր թողարկումը, Յունիբանկը ցուցաբերեց առավելագույնս բաց լինելու պատրաստակամություն և կորպորատիվ կառավարման բարձր որակ:

Ուրախալի է նշել, որ ներդրողները զգալի հետաքրքրություն են ցուցաբերում բանկի երկարաժամկետ ներդրումային գործիքների, այդ թվում՝ բաժնետոմսերի և պարտատոմսերի նկատմամբ և «Յունիբանկի» ռազմավարությունը համարում են արդյունավետ ու հեռանկարային:

2015-ը տնտեսության և, մասնավորապես, բանկային համակարգի համար այնքան էլ բարենպաստ տարի չէր: Չնայած տնտեսության աճի տեմպերը որոշ չափով դանդաղեցին, իսկ մասնավոր փոխանցումների ծավալը և բնակչության վճարունակության մակարդակը կրճատվեցին, Յունիբանկին հաջողվեց տարվա արդյունքներով գրանցել 358 մլն դրամ շահույթ և բիզնեսի առանցքային ուղղություններով ամրապնդել իր շուկայական դիրքերը:

Որպես գործունեության ռազմավարական ուղղություններ Յունիբանկը դիտարկում է մանրածախ բիզնեսը և փոքր ու միջին ձեռնարկությունները:

Հաշվետու տարվա արդյունքներով, բանկի վարկային պորտֆելը գերազանցել է 110 մլրդ դրամը, ժամկետավաճակող կազմել է 91 մլրդ դրամ, իսկ ցպահանջ պարտավորությունները՝ 12 մլրդ դրամ: Բանկի ակտիվ քարտերի քանակը կազմել է ավելի քան 185 000, սպասարկման կետերում շրջանառության ծավալը՝ 73 մլրդ դրամ: Մենք նախատեսում ենք էլ ավելի ամրապնդել

բանկի դիրքերը շուկայում և ընդլայնել մասնաբաժինը վերոհիշյալ ուղղություններում:

Մանրածախ բիզնեսի զարգացումը Յունիբանկը տեսնում է առաջարկվող ծառայությունների և գործիքների տեսականու ընդլայնման, հաճախորդների ինքնասպասարկման գործարքների և հեռահար սպասարկման ուղիների՝ Ինտերնետ և մոբայլ բանկինգի զարգացման միջոցով: Բանկը շարունակում է նաև աջակցության տրամադրումը ՓՄՁ-ներին և անհատ ձեռնարկատերերին՝ ձգտելով մեծացնել տնտեսության ռեալ հատվածի վարկավորման ծավալները:

2015 թվականին ակտիվորեն իրականացվել է բանկի և միջազգային կառույցների համագործակցությունը, որի շրջանակներում ՓՄՁ-ների համար մշակվել են մի շարք վարկատեսակներ:

Յունիբանկն առանձնանում է ծառայությունների և գործիքների մշակման իննովացիոն մոտեցմամբ: Բանկը կիրառում է ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ՝ որպես մրցակցային առավելությունների պահպանման և սպասարկման որակի բարձրացման կարևոր նախապայման: Բանկը միտված է խաչաձև վաճառքների նոր ուղիների զարգացմանը՝ հաճախորդների հետ կառուցելով երկարաժամկետ համագործակցություն:

Հաստատված ռազմավարության համաձայն, նախորդ տարի, բանկն իրականացրել է բիզնեսի արդյունավետության բարձրացման, կայունության ապահովման և շարունակական զարգացման խնդիրները: Այսօր ռեսուրսների օպտիմալացման և ծախսերի կրճատման գործընթացն առնչվում է բանկի աշխատանքի բոլոր ուղղություններին: Մշտական վերահսկողության ներքո են գտնվում լիկվիդայնության, կապիտալի համարժեքության, պահուստների, բանկային ռիսկերի կառավարման և ռեսուրսային բազայի և վարկային պորտֆելի դիվերսիֆիկացմանը վերաբերող հարցերը: Մեր ռազմավարությունը նախատեսում է բանկի ներդրումային գրավչության բարձրացում՝ առաջնորդվելով

միևնորիտար բաժնետերերի իրավունքների և շահերի պաշտպանության սկզբունքներով: Հատկապես մեծ ուշադրություն է հատկացվում հաճախորդներին և բաժնետերերին բանկի գործունեության, նպատակների և աշխատանքի արդյունքների մասին ժամանակին, հավաստի և լիարժեք տեղեկատվության տրամադրմանը: Դա է Յունիբանկի հաջող գործունեության և բնակչության վստահության գրավականը: Եթե 2010 թվականին բանկի ծառայություններից օգտվում էր 40 000 հաճախորդ, ապա 2015 թվականին մեր հաճախորդների թիվը կազմեց 300 000:

Մենք չենք բավարարվում ձեռքբերումներով և ջանքերն ուղղում ենք 2016-2020թթ. զարգացման ռազմավարության իրագործմանը, որի համաձայն Յունիբանկի շուկայական մասնաբաժինը ավանդների գծով կկազմի 9%, մանրածախ բիզնեսի գծով՝ 13%, իսկ ՓՄՁ-ների գծով՝ 9.5%: Հաճախորդների թիվը նախատեսվում է մեծացնել մինչև 430 000, իսկ կապիտալի մեծությունը՝ 42 մլրդ դրամի: Մեր առաջնահերթություններն են՝ հաճախորդամետ քաղաքականությունը, եկամտաբեր ուղղությունների զարգացումը և բանկի բաժնետիրական արժեքի աճը:

Բանկի Վարչության և անձամբ իմ անունից խորին երախտագիտությունս են հայտնում բանկի բաժնետերերին, հաճախորդներին և գործընկերներին՝ վստահության և աջակցության համար: Վստահ են, որ մեր համագործակցությունը կշարունակվի հետագայում ևս և կլինի նույնպես արդյունավետ ու փոխշահավետ:

Շնորհակալ են բանկի բոլոր աշխատակիցներին բարձր պրոֆեսիոնալիզմի և թիմային աշխատանքի համար:

2016 թվականին Յունիբանկը կշարունակի աշխատել արդյունավետության և բիզնեսի շահութաբերության բարձրացման ուղղությամբ՝ ձգտելով ապահովելու բանկի հաջող զարգացումն ի շահ հաճախորդների և բաժնետերերի:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հայաստանի բանկերի ընդհանուր կապիտալը 2015 թվականին աճել է 17,8%-ով, կազմելով 561,9 մլրդ դրամ: Բանկերի ակտիվները հաշվետու տարում կազմել են 3 548,1 մլրդ դրամ՝ աճելով 4,67%-ով, պարտավորությունները՝ 2,52%-ով մինչև 2 986,1 մլրդ դրամ: ՀՀ բանկային համակարգի վարկային ներդրումների ծավալը 2015 թվականին կազմել է 2 182,2 մլրդ դրամ՝ 2014 թվականի համեմատ աճելով 0,69%-ով: Ժամկետային ավանդները 2015 թվականին աճել են 12,3%-ով՝ կազմելով 1 282,2 մլրդ դրամ:

Հայաստանի բանկերի զուտ շահույթը 2015 թվականին կազմել է 18,2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 16,2 մլրդ դրամի փոխարեն՝ աճելով 12,3%-ով: Բանկային համակարգը հաշվետու տարում պետական բյուջե է փոխանցել 41,4 մլրդ դրամի հարկեր՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 10%-ով:

Վերջին յոթ տարիներին բանկային համակարգի ակտիվներն աճել են երեք անգամ: Ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը կազմում է 70%, իսկ վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը՝ 43%.

Ակտիվներ/ՀՆԱ  
**70%**


Վարկեր/ՀՆԱ  
**43%**

Ակտիվներ  
**356%**

Կապիտալ  
**236%**

Վարկային ներդրումներ  
**344%**

Աճի միտում (2008-2015թթ.)





2015 թվականին բանկային ընդհանուր ակտիվներում վարկերի մասնաբաժինը կազմել է 62%, ինչը գերազանցում է 2003 թվականի ցուցանիշը երկու անգամ: 2003 թվականից ակտիվների և վարկերի տարեկան ընդհանուր աճը կազմում է , համապատասխանաբար, 23% և 29%.

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

### Բանկի առաքելությունը և արժեքները

Յունիբանկ ԲԲԸ-ն դիմամիկ զարգացող իննովացիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի:

Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև որակյալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:



### ՄԵՆՔ ԶԳՏՈՒՄ ԵՆՔ՝

- • • ամրապնդել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում
- • • ապահովել ծառայությունների առավելագույն որակ և ներդրումների բարձր եկամտաբերություն
- • • կատարելագործել հաճախորդների սպասարկման գործընթացը
- • • ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- • • խթանել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության զարգացումը

### ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- • • ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- • • ուժեղ թիմ
- • • ապրանքանիշի բարձր ճանաչելիություն և հեղինակություն
- • • 15 տարվա անընդհատ առաջընթաց
- • • գործունեության թափանցիկություն և վստահելիություն



## ԳԱՌՆԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐ

Հեթանոսական տաճարը կառուցվել է մ.թ.  
I-ին դարի 2-րդ կեսերին:

Տաճարի պատերը շարված են սրբատաշ  
բավալտի խոշոր (մինչև 1,5մ  
երկարության) քարերով՝ առանց  
շաղախի, միացված են  
երկաթե կապերով,  
հանգույցները լցված են կապարով:  
Սյուների խոյակները վարդարված են  
բարձրաքանդակ ձվարդներով  
(ձվաձև վարդամուտիվ)  
և գալարավարդերով,  
քիվը՝ առյուծի գլուխներով ու  
արմավենիկներով:

ԱՆՍԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

## 2015 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ❑ Յունիբանկը վերակազմավորվեց բաց բաժնետիրական ընկերության և բորսայում նախնական հրապարակային առաջարկի (IPO) միջոցով իրականացրեց բաժնետոմսերի տեղաբաշխում:
- ❑ Յունիբանկի բաժնետոմսերը ցուցակվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ի երկրորդային (B) հարթակում:
- ❑ Raiffeisen Bank International-ը SWIFT փոխանցումների բարձր որակ ապահովելու համար Յունիբանկին հանձնեց RBI STP «Որակի գերազանցության մրցանակ»:
- ❑ «Յունիբանկում» ներդրվեց ISO 27001:2013 միջազգային ստանդարտների պահանջին համապատասխան տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը:
- ❑ Յունիբանկը դարձավ Դեպոզիտար համակարգի հաշվի օպերատոր և կարգավորվող շուկայում հաշվարկային համակարգի անդամ:
- ❑ «ՄԵՐԿՈՒՐԻ» ամենամյա մրցանակաբաշխությանը Յունիբանկը Հայաստանի «Ժողովրդական բանկ» անվանակարգում ձանաչվեց լավագույնը:

IPO-ի արդյունքները  
**186** բաժնետեր

Բաժնետոմսերի տեղաբաշխման ծավալը  
**2,4** մլրդ ՀՀ դրամ

Մեկ բաժնետոմսի գինը  
**230** ՀՀ դրամ

Բորսայական շուկա  
**Nasdaq OMX Armenia**

Բաժնետոմսերի ցուցակում  
հարթակ **B**

Մարքեթ-մեյքեր  
«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ


Հաշվի օպերատոր  
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2015 թվականի վերջին «Յունիբանկն» ապահովել է հետևյալ ցուցանիշները՝


	Դիրքը շուկայում	Մասնաբաժինը
Ակտիվներ	9	4.7%
Պարտավորություններ	9	4.5%
Ընդհանուր կապիտալ	11	4.0%
Վարկային ներդրումներ	8	5.1%
Ավանդներ	7	5.9%
Հիփոթեքային վարկեր	6	7.5%
Սպառողական վարկեր	4	9.3%
Բանկային քարտեր	5	8.1%

Պարտավորություններ /մլն ՀՀ դրամ/




**158** ԱԿՏԻՎՆԵՐ մլրդ դրամ    **135** ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ մլրդ դրամ    **22.7** ԿԱՊԻՏԱԼ մլրդ դրամ    **358** ՇԱՀՈՒՅԹ մլն դրամ

Ակտիվներ /մլն ՀՀ դրամ/




Ընդհանուր կապիտալ /մլն ՀՀ դրամ/




## ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

2015 թվականի արդյունքներով Բանկի վարկային պորտֆելը կազմել է 110 մլրդ ՀՀ դրամ: Դրամային վարկային պորտֆելը կազմել է 38 մլրդ ՀՀ դրամ (ընդհանուր վարկային պորտֆելի 34%-ը), իսկ արտարժութային վարկային պորտֆելը՝ 74 մլրդ ՀՀ դրամ (ընդհանուր վարկային պորտֆելի 66%-ը): Վարկավորման միջին տոկոսադրույքը 31.12.2015թ. դրությամբ կազմել է 15.96%: Վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման արդյունքում վարկային պորտֆելում մանրածախ վարկերի ծավալը կազմել է 52%, ՓՄՁ վարկերինը՝ 28%, կորպորատիվ վարկերինը՝ 20%:


Վարկային պորտֆել /մլն ՀՀ դրամ/




Վարկային պորտֆելի կառուցվածքը /մլն ՀՀ դրամ/




Վարկային պորտֆելի դինամիկան /մլն ՀՀ դրամ/



Վարկային պորտֆելը՝ ըստ արժույթների




Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները /մլն ՀՀ դրամ/



## ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

2015 թվականի արդյունքներով Յունիբանկը ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալով զբաղեցրել է 5-րդ տեղը ՀՀ բանկային համակարգում: Տարեվերջի դրությամբ ժամկետային ավանդները կազմել են 91 մլրդ դրամ, որից 92%-ը բաժին է ընկել ֆիզիկական անձանց ավանդներին: Ցպահանջ պարտավորությունների ծավալը կազմել է 12 մլրդ դրամ, որից 54%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, իսկ 46%-ը՝ ֆիզիկական անձանց:

Ցպահանջ ավանդները /մլն ՀՀ դրամ/






# ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

## ՕՔՏՖՈՐԴ


Օքսֆորդի համալսարանը ամենաառաջին անգլալեզու ուսումնական հաստատությունն ու Մեծ Բրիտանիայում հիմնադրված առաջին ու աշխարհի լավագույն կրթօջախներից մեկն է: Օքսֆորդը կրթության բարձր որակի համար հիրավի մեծ հեղինակություն է վայելում ամբողջ աշխարհում: Ըստ բրիտանացի և ֆրանսիացի պատմիչների՝ Օքսֆորդի համալսարանում մարդիկ կարողանում էին կրթություն ստանալ դեռևս 1096 թվականից:

2015 թվականին արտարժույթի փոխարկային գործառնություններից ստացված եկամուտը կազմել է 678 մլն ՀՀ դրամ, կոմիսիոն եկամուտը՝ 1.3 մլրդ ՀՀ դրամ:

Եկամուտ արտարժույթի փոխարկային գործառնություններից /մլն ՀՀ դրամ/



Կոմիսիոն եկամուտ /մլն ՀՀ դրամ/



## ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

2015 թվականին Յունիբանկի մանրածախ բիզնեսը շարունակել է դինամիկ զարգացումը, ինչը հնարավորություն տվեց բանկին պահպանելու իր դիրքերը մանրածախ վարկավորման շուկայի առաջատարների շարքում: Անգրավ սպառողական վարկերի պորտֆելը տարեվերջին կազմեց 23.5 մլրդ դրամ (147 000 վարկ), իսկ պլաստիկ քարտերով վարկերի ծավալը՝ 3.8 մլրդ դրամ (14 500 վարկ): Անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկերի ծավալը կազմեց 11 մլրդ դրամ (1 800 վարկ), ավտովարկերի ծավալը՝ 1.3 մլրդ դրամ (430 վարկ) :

2015 թվականին բանկը շարունակել է ակտիվ համագործակցությունը հիփոթեքային վարկերը վերաֆինանսավորող ընկերությունների հետ, որի արդյունքում հաշվետու տարում տրամադրել է 1.3 մլրդ դրամի 151 հիփոթեքային վարկեր: Հիփոթեքային վարկերի պորտֆելը կազմել է 14.3 մլրդ դրամ (1 400 վարկ), որից 811 մլն ՀՀ դրամ գումարի 83 վարկ տրամադրվել է «Ազգային Հիփոթեքային Ընկերության» վերաֆինանսավորման շրջանակներում, իսկ 464 մլն ՀՀ դրամ գումարի 63 վարկը՝ «Բնակարան Երիտասարդներին» ընկերության հետ համագործակցության շնորհիվ:

2015 թվականին բանկը սկսեց ոսկու գրավով վարկավորումը: Ոսկու գրավով ապահովված վարկերի ծավալը կազմել է 352 մլն դրամ, քանակը՝ 650 վարկ:

Վարկային պորտֆելում քարտային ու մանր սպառողական վարկային պորտֆելի չափաբաժինը 31.12.2015թ. դրությամբ կազմել է 26% : Մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է ավելի քան 20%, տոկոսային եկամուտը՝ 11 մլրդ ՀՀ դրամ (տոկոսային եկամուտն»-րի 59%-ը)՝ 2014թ-ի համեմատությամբ աճելով 0.7 մլրդ դրամով կամ 6.4%-ով: Մանրածախ վարկավորման բարձր ցուցանիշները

2015 թվականին ապահովվել են հետևյալ միջոցառումների շնորհիվ.



- Յունիբանկի կողմից լիարժեքորեն գործարկվել է «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ընկերության CRM-համակարգը: Ժամանակակից համակարգի ներդրումը բանկին հնարավորություն տվեց էապես կրճատել վարկերի հաստատման և ձևակերպման ժամանակը: 2015թ.-ին համակարգի կողմից մշակված հայտերի քանակը հասել է 227 000: Այսօր ապրանքների ձեռքբերման համար սպառողական վարկը Յունիբանկում հաստատվում է մեկ րոպեում: Ընդ որում, վարկային հայտը կարելի է ներկայացնել նաև օնլայն՝ առանց բանկ այցելելու: Վարկերի ձևակերպումն իրականացվում է նաև բանկի գործընկեր՝ խոշոր առևտրային ցանցերում:

- Բանկը համագործակցել է ավելի քան 250 կազմակերպությունների հետ, որոնց հետ ձեռք բերված համագործակցության շրջանակներում Բանկն իր ծառայությունները ներկայացնում է ավելի քան 500 վաճառատարահներում: Ներկայումս մանր սպառողական վարկավորման ոլորտում Բանկն առաջատար ենթակում է: Հաջողության գրավականն է համատեղ մշակված մրցունակ վարկատեսակները և ակտիվ գովազդային արշավները:

- Ընդլայնվել է պրոմոկետների ցանցը՝ բացվել է թվով 18 պրոմոկետներ, դրանց ընդհանուր թիվը հասցնելով 54-ի, որոնց միջոցով 2015թ.-ին տրամադրվել է 6.2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի 28 450 վարկ:

- Բանկի 7 մասնաձյուղերում սկսվել է ոսկու գրավով վարկերի տրամադրումը:

- Ակտիվորեն գովազդվել է վարկային օնլայն հայտերի ընդունման հնարավորությունը, կատարելագործվել է վարկային գործիքների առցանց վաճառքի գործընթացը: 2015թ.-ին օնլայն ստացված հայտերի քանակը կազմել է 2 100, գումարը՝ 773 մլն ՀՀ դրամ, որից հաստատվել է 162 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով 480 վարկ:






### ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Հին ձեռագրերի պահպանման աշխարհի ամենահարուստ կենտրոններից մեկը: Այն ստեղծվել է 1921թ-ին՝ էջմիածնի մատենադարանի հիմքի վրա: Մատենադարանը բացառիկ թանգարան է: Այն ունի մատենագիտության ու բնագրագիտության, հին մատենագրության (VXIII դարեր) և մանրանկարչության ուսումնասիրման, ձեռագիր մատյանների ու դիվանական փաստաթղթերի պահպանության, վերականգնման, պատճենահանման, թվայնացման բաժիններ, ինչպես նաև հայագիտական հարուստ գրադարան և պարբերական մամուլի պահոց:

### ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ



### ԲԱՆԿԱՅԻՆ ԶԱՐՏԵՐ

2015 թվականի վերջին Յունիբանկի ակտիվ քարտերի քանակը կազմել է 184 723, բանկոմատների քանակը՝ 120, POS-տերմինալներից՝ 400: Սպասարկման կետերում շրջանառության ծավալը կազմել է մոտ 73 մլրդ դրամ:

Քարտային բիզնեսի զարգացումը Յունիբանկի գործունեության ռազմավարական ուղղություններից մեկն է: 2015 թվականին Բանկը շարունակել է իր հետևողական քայլերը թե գործող տեխնիկական միջոցների վերազինման, և թե նոր տեխնոլոգիաների ներդրման գործում:

Բանկը հանդիսանում է Visa և ArCa վճարային համակարգերի անդամ, անդամակցել է նաև Master Card վճարային համակարգին:

Քարտային սպասարկման տեխնոլոգիաների կատարելագործման նպատակով բանկը շարունակում է զարգացնել սեփական պրոցեսինգային կենտրոնը և հերթական անգամ հաջողությամբ անցավ PCI DSS ստանդարտի պահանջներին համապատասխանության սերտիֆիկացիոն աուդիտը:



### «ՅՈՒՆԻՍՏՐԻՄ» ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ


Շրջանառության կայուն աճի, շահավետ ցածր սակագների և լայն աշխարհագրության շնորհիվ «Յունիստրիմ» համակարգը 2015 թվականի ընթացքում պահպանել է առաջատարի դիրքը, հանդիսանալով դրամական փոխանցումների ամենապահանջված համակարգը Հայաստանում:

«Յունիստրիմ» դրամական փոխանցումների միջազգային համակարգի հայաստանյան շրջանառությունը կազմել է 538.1 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում, դեպի Հայաստան կատարված փոխանցումների ծավալը կազմել է 329 մլն ԱՄՆ դոլար, իսկ դեպի դուրս կատարված փոխանցումների ծավալը՝ 209.2 մլն ԱՄՆ դոլար:

Յունիբանկի կողմից սպասարկված փոխանցումների ծավալը հաշվետու տարում կազմել է 162.4 մլն ԱՄՆ դոլար: Դեպի Հայաստան կատարված փոխանցումների ծավալը կազմել է 103.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ դեպի դուրս կատարված փոխանցումների ծավալը՝ 59 մլն ԱՄՆ դոլար: Յունիբանկի կողմից սպասարկված փոխանցումների քանակը հաշվետու տարում կազմել է 309.262, մեկ փոխանցման միջին մեծությունը 525 ԱՄՆ դոլար:


## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

2015 թվականին Յունիբանկը հաջողությամբ շարունակել է զարգացնել կորպորատիվ ուղղությունը, որը ներառում է խոշոր կորպորատիվ և ՓՄՁ հաճախորդների սպասարկումը: Կորպորատիվ տնօրինությունն իր իրավասությունների շրջանակում մշակում և զարգացնում է վարկային գործիքներն ու ծառայությունները: Կորպորատիվ տնօրինության կառուցվածքը ձևավորվել է բիզնես հաճախորդների տարբեր կարգերի սպասարկման առանձնահատկություններից ելնելով: Դա հնարավորություն է տալիս օպտիմալացնել վարկային վերլուծության իրականացման մոտեցումները և բարձրացնել վարկային պորտֆելի որակը: Վարկային բիզնեսի հետ մեկտեղ կորպորատիվ տնօրինության համար ռազմավարական նշանակության ուղղություններ են նաև իրավաբանական անձանց հաշվարկա-դրամարկղային սպասարկումը, արժույթափոխարկային գործարքները և հեռահար սպասարկումը:



Բանկի ռազմավարության շրջանակներում կորպորատիվ տնօրինության հիմնական խնդիրներն են շուկայում ամուր դիրքերի պահպանումը, արդյունավետության բարձրացումը և ծախսերի հանդեպ խնայողական վերաբերմունքը:

Հավատարիմ մնալով իր վարկային քաղաքականությանը՝ Բանկը շարունակել է դիվերսիֆիկացնել իր վարկային պորտֆելը՝ մեծացնելով մանրածախ վարկերի և ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում: Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս Բանկը վարել է պահպանողական քաղաքականություն՝ հիմնականում ակտիվները կարճաժամկետ տեղաբաշխելով համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում: Այս նպատակով Բանկը պարբերաբար կատարել է տնտեսության ճյուղերի վերլուծություն, ինչպես նաև ՓՄՁ-ի գծով պլանային ցուցանիշները կատարելու նպատակով իրականացվել են ՓՄՁ վարկավորման գծով սքրինգային մոդելի մշակում, ՓՄՁ վարկավորման գծով աշխատակիցների որակավորման բարձրացում:



## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ԼՈՒՎՐ

Աշխարհի խոշորագույն թանգարաններից է, հիմնադրվել է 1791 թ.-ին՝ Փարիզում: Թանգարանի գեղարվեստական ֆունդի հիմքը եղել են թագավորական հավաքածուները, որոնք հետագայում համալրվել են մենաստանների, եկեղեցիների և ազգայնացված որոշ տոհմական հավաքածուներով, նաև Նապոլեոնի արշավանքների ավարով, բազմաթիվ նվիրաբերումներով: Լուվրն ունի արևելյան, եգիպտական, հունական և հռոմեական հնագույն իրերի, քանդակի, գեղանկարի, դեկորատիվ-կիրառական արվեստի և այլ բաժիններ:

## ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2015 թվականին Յունիբանկը շարունակել է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը: 2013 թվականին Բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) միջև կնքված պայմանագրի համաձայն, ավարտին հասցվեց Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից Բանկում ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ խորհրդատվական ծառայությունների մատուցումը, որի արդյունքում մշակվեցին ռիսկերի կառավարմանն առնչվող կարգեր, ներդրվեցին նոր հաշվետվական ձևեր և կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ՝ Բանկի կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացների արդիականացման և գործուն համակարգի ներդրման ուղղությամբ:

Ռիսկերի կառավարման համակարգի (ՌԿՀ) նպատակն է աջակցել Բանկին իր գործունեության ընթացքում առաջացող համընդհանուր ռիսկը պահելու այն մակարդակի վրա, որն ընդունել է Բանկն իր ռազմավարական խնդիրների շրջանակում: ՌԿՀ-ի առաջնահերթ խնդիրն է առավելագույնս ապահովել Բանկի ակտիվների և կապիտալի ամբողջականությունը, ինչպես նաև նվազագույնի հասցնել բանկային գործունեությանը բնորոշ բոլոր ռիսկերը, որոնք կարող են հանգեցնել չնախատեսված կորուստների:

ՌԿՀ-ն իր նպատակին հասնելու համար առաջնորդվում է համակարգված համալիր մոտեցմամբ, որը նպատակաուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը՝

- բացահայտել և վերլուծել բանկային գործունեության ընթացքում ծագող բոլոր ռիսկերը,
- սահմանել տարբեր ռիսկերի նկատմամբ վերաբերմունք,
- իրականացնել ռիսկի յուրաքանչյուր տեսակի որակական և/կամ քանակական գնահատումներ,

- գտնել տարբեր տեսակի ռիսկերի միջև փոխադարձ կապ և կախվածություն՝ նպատակ ունենալով գնահատել այն միջոցառումների ներգործությունը տարբեր տեսակի ռիսկերի վրա, որոնք պետք է ուղղվեն առանձին վերցված մեկ տեսակի ռիսկի չեզոքացմանը,
- կատարել արդեն իսկ իրականացված և պլանավորված գործարքների գծով ռիսկերի մակարդակի ամբողջական և համալիր վերլուծություն՝ նպատակ հետապնդելով որոշել բանկային ռիսկերի համընդհանուր /գումարային/ չափը,

- գնահատել համընդհանուր /գումարային/ ռիսկերի թույլատրելի չափը և հիմնավորվածությունը,

- ստեղծել ռիսկերը հետևելու /ուղեկցելու/ ենթահամակարգ, որը կբացահայտի դրանք բացասական տենդենցների ի հայտ գալու ժամանակ, ինչպես նաև ստեղծել արագ և համարժեք գործելու ենթահամակարգ, որն ուղղված կլինի այդ ռիսկերի չեզոքացմանը կամ մինիմալացմանը:


Բանկի «Ռիսկերի կառավարման քաղաքականությունը» առաջնորդվում է ՀՀ օրենքներով, ՀՀ ԿԲ օրենքներով և նորմատիվ ակտերով, կանոնակարգերով, Բազելյան կոմիտեի համապատասխան փաստաթղթերով, Ռիսկերի Կառավարման Համընդհանուր Սկզբունքներով /Generally Accepted Risk Principles - GARP/: Հաշվի առնելով Բանկի գործունեության բնույթը և ծավալները, Բանկում առանձնահատուկ ուշադրության են արժանանում հետևյալ կարևորագույն ռիսկերը.

- Վարկային ռիսկ
- Տոկոսադրույքի ռիսկ
- Արտարժույթային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Գործառնական ռիսկ

# ԱՃ

## ՏՐԻՆԻՏԱ-ԴԵԻ-ՄՈՆՏԻ

Եկեղեցին խոյանում է Պինչո բլրակի վրա գտնվող հրապարակում, Հռոմի ամենահայտնի տեսարժան վայրերից մեկի՝ Իսպանական աստիճանների մոտ:



### ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Վարկային ռիսկը փոխառուի ֆինանսական վիճակի վառթարացումն է, որի հետևանքով անհնար է դառնում պարտավորությունների կատարումը և առաջանում է վարկը չվերադարձնելու ռիսկ: Վարկային պորտֆելների վերաբերյալ տարատեսակ վերլուծություններն ու հաշվետվությունները, վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման քաղաքականությունը, սթրես թեստերը հնարավորություն են ընձեռում առավելագույնի հասցնել վարկային ռիսկերի կառավարման արդյունավետությունը: Բանկն, ունենալով Ռիսկերի կառավարման գործուն համակարգ, կարողացել է կառավարել Բանկին բնորոշ վարկային ռիսկերը իր կողմից ընդունելի ռիսկ-ախորժակի շրջանակներում:



### ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՌԻՍԿ

Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններից: Բանկի գրեթե բոլոր ակտիվներն ու պարտավորությունները ֆիքսված տոկոսադրույքով են: Այնուամենայնիվ այդ դեպքում ևս կարող են առաջանալ ռիսկեր, կապված բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունների անհամապատասխանության հետ: Տոկոսադրույքի ռիսկը գնահատելու համար օգտագործվում են լայնորեն տարածում գտած ժամկետայնությունների ձեղքվածքի /GAP/ և դյուրացիայի մոդելները:



### ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՌԻՍԿ

Արտարժութային ռիսկը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների, ինչպես նաև հասարակության մոտ արտարժութային ակտիվների և պարտավորությունների ռիսկի ոչ պատշաճ կառավարման արդյունքում: Արտարժութային ռիսկը գնահատելու համար Բանկն օգտագործում է VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև տարբեր շուկային սցենարներ՝ գնահատելու արտարժութային ռիսկի ազդեցությունը Բանկի շահութաբերության, ինչպես նաև կապիտալի համարժեքության նորմատիվի վրա: Բանկում արտարժութային ռիսկը բավականին ցածր մակարդակի վրա է, քանի որ այդ հարցում բանկը վարում է բավականին զգուշավոր քաղաքականություն և հիմնականում արտարժութային բաց դիրքեր չի ունենում:



### ՍԵԳՈՎԱՅԻ ԶՐԱՆՑՈՒՅՑ (ակվեդուկ)

Արևմտյան Եվրոպայում պահպանված ամենաերկար Հին Հռոմեական ջրանցույցը: Զրանցույցը կառուցվել է բարդ ռելիեֆ ունեցող տեղանքով ջուրը ինքնահոս քաղաք հասցնելու և բաշխելու համար: Ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

## ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ

### ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

Իրացվելիությունը Բանկի՝ իր կողմից ստանձնած ֆինանսական և այլ պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու ընդունակությունն է, իսկ իրացվելիության ռիսկը Բանկի կողմից այդ պարտավորությունների ամբողջ ծավալով կատարելու անկարողության արդյունքում հնարավոր կորուստների ռիսկն է: Իրացվելիության ռիսկը առաջանում է Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների անհամապատասխանությունից և/կամ չնախատեսված դեպքերում Բանկի կողմից անմիջապես և միանվագ կերպով իր պարտավորությունների դիմաց վճարման անհրաժեշտության արդյունքում:

Իրացվելիության կառավարման համար Բանկն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- իրացվելիության կառավարումը կատարվում է ամենօրյա և անընդհատության հիմունքներով,

- իրացվելիության կառավարման համար Բանկում առկա է իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության հստակ տարանջատում դեկավար օղակների և այլ ստորաբաժանումների միջև,
- Բանկի գործունեության ծավալներին և առանձնահատկություններին համարժեք իրացվելիության մակարդակի պահպանման համար սահմանաչափերի սահմանում:

Իրացվելիության ռիսկի գնահատման և վերլուծության համար Բանկն օգտագործում է հետևյալ մեթոդները.

- գործակիցների մեթոդ (նորմատիվային մոտեցում),
- ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնությունների ձեղքվածքների վերլուծության մեթոդ (իրացվելիության ավելցուկ/դեֆիցիտ, իրացվելիության ավելցուկ/դեֆիցիտի գործակից),
- իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով առանձնահատուկ ուշադրություն է դարձվում սթրես թեստերի կիրառմանը, երբ գնահատվում է Բանկի կողմից ներգրավված միջոցների անսպասելի /ժամկետից շուտ/ արտահոսքի ազդեցությունը Բանկի իրացվելիության նորմատիվների վրա:

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Բիզնեսի ծավալների ընդլայնմանը զուգահեռ Յունիբանկը մշտապես ակտիվ ներդրումներ է կատարել IT-ում: Մանրածախ ուղղության դինամիկ զարգացումը, բանկի մասնաձյուղային ցանցի ընդլայնումը և նորույթ հանդիսացող լուծումների կիրառումը ենթադրում են IT ենթակառուցվածքի ապահով աշխատանք բոլոր բիզնես գործընթացներում: Հաճախորդը պետք է վստահ լինի տվյալների անվտանգությանն ու ապահովությանը:

2015 թվականին Բանկը սկսեց երկու խոշոր նախագծերի՝ Տվյալների մշակման ժամանակակից կենտրոնի ստեղծման և «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ընկերության կողմից մշակված նոր CRM համակարգի ներդրման իրականացումը: Տվյալների մշակման ժամանակակից կենտրոնը հիմնված է հեռահաղորդակցման ոլորտում խոշորագույն ընկերություններից մեկի՝ Huawei-ի համալիր լուծման վրա: Այն իրենից ներկայացնում է ունիվերսալ տեղեկատվական ենթակառուցվածք, որը տարբերվում է տեղեկատվության պաշտպանվածության և ապահովության բարձր մակարդակով:

Յունիբանկի տվյալների մշակման կենտրոնը նախատեսված է սերվերային և կոմունիկացիոն սարքավորումների տեղաբաշխման համար և կարող է պահել և մշակել բանկային տեղեկատվության հսկայական ծավալներ: Նախագծի իրականացման ընթացքում օգտագործվել են միջազգային չափանիշներին համապատասխան առաջատար տեխնիկական լուծումներ և տեխնոլոգիաներ, ինչը բացառում է ցանկացած խանգարումներ բանկի տեղեկատվական համակարգերի աշխատանքում էներգոմատակարարման խափանման ժամանակ: Կենտրոնի շահագործումը նախատեսված է 2016 թվականին:

Յունիբանկը Հայաստանում առաջին բանկերից մեկն էր, որ ամբողջությամբ ավտոմատացրեց սպառողական վարկավորման հայտերի ուսումնասիրման գործընթացը: Դա հնարավորություն տվեց Բանկին

## ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Գործառնական ռիսկերը կախված են Բանկի ընդհանուր ռազմավարությունից, Բանկի կառուցվածքից, ներքին համակարգերի /ներառյալ համակարգչային և այլ տեխնոլոգիաները/ ֆունկցիոնալությունից, Բանկի քաղաքականության և ընթացակարգերի համաձայնեցվածությունից, կառավարման սխալներից և մեքենայություններից խուսափելու ուղղված միջոցառումներից:

- Ռազմավարական ռիսկն առաջանում է, երբ Բանկն ընտրում է ոչ իրատեսական ռազմավարություն, որը համահունչ չէ բանկային ծառայությունների շուկայում գործող իրավիճակին ու կանոններին, հստակ սահմանումներ տրված չեն, հստակ նպատակներ նշված չեն:
- Ներքին համակարգերի և գործարքների ռիսկն առաջանում է, երբ Բանկում հստակ սահմանված չեն լինում աշխատողների պարտականությունները, պատասխանատվությունները, հստակ չեն լինում գործողությունների ընթացակարգերը, որոնց արդյունքում էլ առաջանում է ֆինանսական կորուստների ռիսկ:
- Տեխնոլոգիական ռիսկերն առաջանում են տեխնոլոգիական միջոցների անկատար, ոչ ժամանակակից և գործարքներ կատարելու համար ոչ պիտանի լինելուց, ինչը Բանկին կարող է նյութական վնասներ հասցնել:
- Կառավարչական սխալների և մեքենայությունների ռիսկն առաջանում է, երբ Բանկում առկա չէ կառավարման արդյունավետ կոլեգիալ համակարգ, համա-

պատասխան հանձնաժողովներ, կոմիտեներ, ներքին հսկողության համակարգ, որի արդյունքում Բանկը կարող է ֆինանսական վնասներ կրել:

Բանկը գործառնական ռիսկի կառավարման նպատակներին և խնդիրներին հասնում է հետևյալ մեթոդների և սկզբունքների կիրառմամբ: «Պաշտպանական երեք գծերի մոդել»-ն իր մեջ ներառում է պաշտպանական հետևյալ երեք մակարդակները.

1. աշխատակիցների կողմից իրենց գործունեության ոլորտում անմիջական պատասխանատվություն գործառնական ռիսկի կառավարման համար,
2. ռիսկի կառավարման ֆունկցիաներ (ռիսկերի կառավարման տնօրեն, ռիսկ մենեջերներ),
3. ներքին աուդիտ:

Գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման համար բանկը կիրառում է հետևյալ հիմնական սկզբունքները՝


- գործառնական ռիսկի բացահայտման, վերլուծության, դասակարգման և մոնիտորինգի արդյունավետ համակարգի ներդրում,
- սահմանային լիմիտների համակարգի ներդրում, իրավասությունների և որոշումների կայացման համակարգի ներդրում,
- տեղեկատվական համակարգի ներդրում,
- վերահսկման արդյունավետ համակարգի ներդրում:

շատ արագ և զգալի ամրապնդել իր դիրքը սպառողական վարկավորման շուկայում: Մինչ 2015 թվականը մշակվել է սպառողական վարկավորման մոտ 611 հազար հայտ, որից 50%-ը հաստատվել է: 2015թ.-ին Յունիբանկի վարկային կոնվեյերը մշակել է ավելի քան 221 հազար հայտ: ProtoCRM-ը, որը ներդնում է Յունիբանկը, պատկանում է CRM-համակարգերի նոր սերնդին և մշակված է «Պրոտոբեյզ Լաբարատորիզ»-ի կողմից: ProtoCRM ամպային համակարգը հնարավորություն է տալիս լուծելու բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջանում են մեծ քանակով հաճախորդներ ունեցող ընկերությունների մոտ, օրինակ՝ հաճախորդային բազայի վարումը մեկ համակարգում, վաճառքների ուղու կառուցում, անվճար և արդիական վերլուծության տրամադրում ցանկացած ժամանակ: Protobase Loanstation մոդուլը (վարկավորման գործընթացի ավտոմատացում) թույլ կտա Յունիբանկին առավել արդյունավետ գնահատել հաճախորդի վարկունակությունը, կառուցել հաճախորդի պրոֆիլը՝ հիմնվելով սեփական վիճակագրական բազայի վրա և բացառել մարդկային գործոնը վարկի վերաբերյալ որոշում կայացնելիս: Դրա հետ մեկտեղ, վարկային հայտի վերաբերյալ որոշումը կայացվում է ընդամենը մեկ րոպեում:

Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով Յունիբանկը ներդրեց ISO 27001:2013 միջազգային ստանդարտները: Սերտիֆիկացումը կնպաստի բանկի տեղեկատվական անվտանգության համակարգի ռացիոնալացմանը, հաճախորդների անձնական տվյալների պաշտպանության մակարդակի բարձրացմանը, տվյալների մշակման և վերահսկման գործընթացի արդյունավետության բարելավմանը, ինչպես նաև աշխատակիցների որակավորման բարձրացմանը:

Յունիբանկը հաջողությամբ անցել է նաև PCI DSS (PCI Data Security Standard) ստանդարտի պահանջներին համապատասխան սերտիֆիկացիոն աուդիտը:





### ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ

Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում է 45 մասնաձյուղ և ներկայացուցչություն Մոսկվայում: Բանկը մեծ ուշադրություն է հատկացնում մասնաձյուղային ցանցի ընդլայնմանը, կորպորատիվ ստանդարտների ներդրմանն ու որակյալ բանկային ծառայությունների մատուցմանը:

Հաճախորդների սպասարկման բարելավման և մասնաձյուղերի աշխատանքի օպտիմալացման նպատակով, Յունիբանկն անցում է կատարում «մեկ պատուհանի» սկզբունքով աշխատանքի: Արդյունքում մի քանի անգամ մեծացել է հաճախորդների սպասարկման արագությունը և բարձրացել մասնաձյուղերի աշխատանքի արդյունավետությունը: Հաճախորդների սպասարկման նոր ձեւաչափին փոխ առ փոխ կանցնեն բանկի բոլոր մասնաձյուղերը:

Բանկի բոլոր մասնաձյուղերում և առևտրի խոշոր կետերում տեղադրված են վճարային տերմինալներ, որոնց միջոցով հաճախորդները ինքնուրույն կատարում են բանկային հաշվի համալրում, վարկի մարում և կոմունալ վճարումներ: 2015 թվականի արդյունքներով տերմինալների քանակը կազմել է 77, գործարքների տարեկան ծավալը՝ մոտ 9 մլրդ դրամ:

Անհատական բանկային սպասարկման ուղղության զարգացման նպատակով Յունիբանկը 2015 թվականին բացեց նոր մասնաձյուղ՝ Privé: Համապատաս-

խան եկամտի մակարդակ և կարգավիճակ ունեցող հաճախորդներին բանկն առաջարկում է լիարժեք ֆինանսական լուծումներ, որոնք ներառում են կապիտալի կառավարում, արդյունավետ ֆինանսական պլանավորում և ներդրումային ռազմավարության մշակում: Սպասարկման բոլոր փուլերում հաճախորդի հետ աշխատում է անհատական ֆինանսական մենեջերը, որը պատրաստ է աջակցություն ցուցաբերել ցանկացած հարցի դեպքում:

Խոշոր կապիտալի տեր հաճախորդներին անհրաժեշտ է իրենց միջոցների գրագետ, մասնագիտական կառավարում և անհատական մոտեցում: Յունիբանկը ֆինանսական հարցերը Unibank Privé հաճախորդների համար դարձնում է պարզ և արագ լուծվող: 2015 թվականի արդյունքներով Unibank Privé հաճախորդների պորտֆելը գերազանցել է 10 մլն ԱՄՆ դոլարը:

Յունիբանկը կշարունակի ակտիվորեն զարգացնել այս ուղղությունը՝ մշտապես բարելավելով սպասարկման որակը և առաջարկելով նոր ծառայություններ և արտոնություններ:

Յունիբանկը նաև սկսել է իրականացնել մասնագիտացված և մինի մասնաձյուղերի կոնցեպտը՝ մանրածախ հաճախորդների հարմարավետ և արագ սպասարկումը կազմակերպելու համար:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2016 - 2020ԹԹ.

Իր հիմնական ռազմավարական նպատակները Բանկը տեսնում է ՀՀ բանկային համակարգում իր դիրքերի ամրապնդման, բիզնես ծավալների աճի և բարձր շահութաբերություն ունեցող ուղղությունների զարգացման մեջ՝ բիզնես գործընթացների ավտոմատացման, ժամանակակից տեխնոլոգիաների և կառավարման մեթոդների ներդրման, մասնաձյուղային ցանցի և վաճառքների ուղիների ընդլայնման և հաճախորդամետ քաղաքականության միջոցով:

Ինչ ունենք այսօր

ճանաչված ապրանքանիշ կայուն շահութաբերություն ավելի քան 300 000 հաճախորդ ավանդային շուկայի 6% մասնաբաժին մանրածախ բիզնեսի շուկայի 10% մասնաբաժին ՓՄՁ վարկավորման շուկայի 5% մասնաբաժին ժամանակակից IT լուծումներ պրոֆեսիոնալ ղեկավար կազմ 23.2 մլրդ դրամի կապիտալ

Ուր ենք ձգտում /2020թ./

կորպորատիվ կառավարման լավագույն փորձ մինչև 5.2 մլրդ դրամի շահույթ ավելի քան 430 000 հաճախորդ ավանդային շուկայի 9% մասնաբաժին մանրածախ բիզնեսի շուկայի 13% մասնաբաժին ՓՄՁ վարկավորման շուկայի 9.5% մասնաբաժին բիզնես գործընթացների օպտիմալացում լոյալ բաժնետերերի մեծ թիվ 42 մլրդ դրամի կապիտալ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

հազ. դրամ	2016	2017	2018	2019	2020
Ակտիվներ	163,772,803	174,656,975	184,714,661	192,967,341	195,688,118
Վարկային պորտֆել	117,328,964	129,011,541	141,546,746	150,391,424	154,437,977
Այդ թվում					
Բիզնես պորտֆել	56,896,415	60,478,072	64,827,149	67,248,556	68,652,108
Մանրածախ բիզնես	60,432,549	68,533,470	76,719,596	83,142,869	85,785,869
Պարտավորություններ	130,394,739	139,261,568	147,521,967	153,533,733	153,701,009
Գանձապետական պարտավորություններ	7,379,846	10,963,845	8,212,029	4,710,730	284,801
Ավանդներ	116,928,026	121,868,026	130,713,026	137,958,026	141,423,026
Կապիտալ	33,378,064	35,395,407	37,192,694	39,433,608	41,987,109
Զբաղիված շահույթ	3,316,447	5,184,283	5,969,483	6,969,202	8,568,406

P&L ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

հազ.դրամ	2016	2017	2018	2019	2020
Զուտ տոկոսային եկամուտներ	7,352,515	9,611,404	12,080,286	14,251,915	15,590,440
Զուտ կոմիսիոն եկամուտներ	4,911,104	4,708,005	4,802,280	4,933,689	5,068,618
Վարչական ծախսեր	(6,118,235)	(6,230,400)	(6,354,000)	(6,480,000)	(6,609,600)
Եկամուտ օպերացիոն գործունեությունից	6,145,384	8,089,009	10,528,566	12,705,604	14,049,458
Զուտ մասհանումներ հնարավոր կորուստների պահուստին	(2,767,308)	(4,742,268)	(6,125,887)	(7,026,599)	(7,532,519)
Շահույթ հարկումից հետո	2,696,790	2,677,393	3,522,143	4,543,204	5,213,551



## ՉԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԿԱՄԱՐ

Փարիզի ամենահայտնի հուշարձաններից մեկը: Այն գտվում է Շառլ դը Գոլի թաղամասում: Հուշարձանը կառուցվել է ի պատիվ Հեղափոխության և Նապոլեոնական պատերազմներում տարած հաղթանակների:

## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### Կորպորատիվ կառավարման համակարգի ընդհանուր նկարագիրը

Բանկում գործում է լիարժեք կորպորատիվ կառավարման կառուցվածք, որը ներառում է Բաժնետերերի ընդհանուր ժողով, Բանկի Խորհուրդ, Բանկի Վարչություն, Ներքին աուդիտ, Խորհրդին կից Հանձնաժողովներ, Վարչությանը կից Հանձնաժողովներ, Վարկային կոմիտե և Պահուստների կառավարման կոմիտե:

**Բաժնետերերի ընդհանուր ժողովը** հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը, կայացնում է որոշումներ Բանկի գործունեության հիմնական հարցերի վերաբերյալ: Բաժնետերերի ընդհանուր ժողովն անց է կացվում ամեն տարի, նաև Խորհրդի որոշմամբ կարող է գումարվել արտահերթ ժողով: Բաժնետերերի ընդհանուր ժողովի անսաթիվը սահմանում է Խորհուրդը: Բանկը տեղեկացնում է բաժնետերերին Ընդհանուր ժողովի անցկացման մա-

սին, Բանկի պաշտոնական կայքում հրապարակելով հաղորդագրություն ոչ ուշ, քան 30 օր առաջ ժողովի անցկացման ամսաթվից: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները նույն կարգով տեղեկացվում են բաժնետերերին:

**Բանկի Խորհուրդը** հանդիսանում է Բանկի կառավարման կոլեգիալ մարմինը, որը սահմանում է Բանկի գործունեության հիմնական ռազմավարական ուղեցույցները երկարաժամկետ հեռանկարում, սահմանում է ներքին վերահսկողության կազմակերպման մոտեցումները:

**Բանկի Խորհուրդը**, իրականացնելով իր գործունեությունը, հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին, գործում է Բանկի և բաժնետերերի շահերի համաձայն, ինչպես նաև ապահովում է բոլոր այլ շահագրգռված անձանց շահերը և օրինական պահանջները:

**Բանկի Վարչությունն** իրականացնում է ընթացիկ, օպերացիոն գործունեության ղեկավարումը լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ: Վարչությունը հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին և Բանկի Խորհրդին:

**Ներքին աուդիտն** ունի անկախ կարգավիճակ, գործում է Խորհրդի անմիջական հսկողության ներքո: Իրականացնում է Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության ստուգում և գնահատում:

### ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ներդրումային հանձնաժողովը** հանդիսանում է խորհրդատվական-խորհրդակցական մարմին, որն ապահովում է նախնական ներդրումային նախագծերի և ծրագրերի քննարկումը, ինչպես նաև Բանկի ներդրումային քաղաքականության բարելավումը: Տարվա ընթացքում գումարվել է 3 նիստ:

**Աուդիտի և ռիսկերի հանձնաժողովն** ապահովում է ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման ներքին վերահսկողության համակարգերի արդյունավետության բարձրացումը: Տարվա ընթացքում գումարվել է 4 նիստ:

**Պարզևատրումների հանձնաժողովը** սահմանում և Խորհրդի հետ համաձայնեցնում է Բանկի բարձրագույն ղեկավարության անդամների պարզևատրումների ընդհանուր սկզբունքները և քաղաքականությունը, աջակցում է Բանկի կադրային քաղաքակա-

նության և անձնակազմի մոտիվացիոն սխեմայի կատարելագործմանը: Տարվա ընթացքում գումարվել է 2 նիստ:

### ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

**Ակտիվների և պասիվների կառավարման և Սակագնային հանձնաժողովն** իրականացնում է Բանկի հաշվեկշռի կառուցվածքի կառավարման ոլորտում Բանկի գործունեության կոորդինացումը, ակտիվների և պասսիվների ծավալների ըստ ժամկետների և եկամտաբերության օպտիմալ հարաբերակցության հասնելու նպատակով, անց է կացնում Բանկի իրացվելիության կարգավիճակի մոնիտորինգ, ռեսուրսների տեղաբաշխումն առաջնային բիզնես ուղղություններով, սահմանում է առավել ռացիոնալ ֆոնդավորման ձևեր ու կառուցվածքներ: Բանկային գործիքների համար համակարգում է գնային քաղաքականության և սակագնային ցանցի ձևավորումը: Տարվա ընթացքում գումարվել է 32 նիստ:

**Տեղեկատվական Տեխնոլոգիաների և Տեղեկատվական Անվտանգության հանձնաժողովը** համակարգում է բանկային տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և արդիականացման ոլորտում Բանկի քաղաքականության և ռազմավարության մշակման հետ կապված աշխատանքները, աջակցում է ավելի կատարելագործված տեխնոլոգիաների ներդրմանը, ավտոմատացմանը, որի նպատակն է բարձրացնել հաճախորդների սպասարկման որակը և օպտիմալացնել առկա տեխնոլոգիաները: Իրականացնում է տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգի կառավարումը, որի նպատակն է ապահովել Բանկի տեղեկատվական ակտիվների

անվտանգությունը, համաձայն միջազգային չափանիշների և ներքին կանոնակարգերի: Տարվա ընթացքում գումարվել է 7 նիստ:

**Անձնակազմի գնահատման հանձնաժողովն** ապահովում է Բանկի պարզևատրումների և խրախուսումների արդյունավետ և թափանցիկ պրակտիկայի ձևավորումը, կարգապահական միջոցների կիրառումը, իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար իրականացնում է առանցքային ստորաբաժանումների աշխատանքների գնահատումը: Տարվա ընթացքում գումարվել է 18 նիստ:

**Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողովը** որոշումներ է ընդունում մաշված և հետագա շահագործման ոչ ենթակա լինելու գույքի դուրս գրման վերաբերյալ՝ ըստ տարեկան և միջանկյալ գույքագրման արդյունքների: Տարվա ընթացքում գումարվել է 19 նիստ:

**Վարկային կոմիտեն** վարկառուի վարկունակության և վճարունակության վերլուծության հիման վրա, հավատարիմ մնալով Բանկի վարկային քաղաքականության հիմնական սկզբունքներին, ընդունում է որոշում իր լիազորությունների սահմաններում վարկային գործարքների իրականացման հնարավորության և դրանց պայմանների վերաբերյալ, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ (ժամկետների երկարաձգում, պայմանների փոփոխություն և այլն): Տարվա ընթացքում գումարվել է 52 նիստ:

**Պահուստների կառավարման հանձնաժողովը** Բանկի վարկային պորտֆելի կարգավիճակի վերլուծության հիման վրա, վերանայում է Բանկի վարկային պորտֆելի առողջացման ուղիները վերակազմավորման և վարկային պարտավորությունների վերաֆի-

նանսավորման ծանապարհով: Իրավասու է որոշակի սահմաններում ընդունել որոշումներ կամ Խորհրդին ներկայացնել առաջարկություններ վարկային պարտքի ներման վերաբերյալ: Տարվա ընթացքում գումարվել է 17 նիստ:


Բանկում հաստատված է ներքին փաստաթուղթ՝ «Կորպորատիվ մշակույթի քաղաքականությունը», որը սահմանում է ղեկավարության և անձնակազմի, պետական մարմինների փոխհարաբերությունները, գործարար էթիկան և շահերի բախումը:

### ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏՈՐ

Բանկը, տարեկան ֆինանսական հաշվետվությունների ստուգման և հավաստիության հաստատման նպատակով, ներգրավում է անկախ մասնագիտական աուդիտորական կազմակերպություն – արտաքին աուդիտոր: Գործող օրենսդրությանը համապատասխան աուդիտորի ընտրությունն իրականացվում է բաց մրցույթի հիման վրա: Աուդիտորի բաց մրցույթը անց է կացվում Մրցութային հանձնաժողովի՝ Բանկի Վարչության կողմից: Մրցութային փաստաթղթերում նշված չափանիշների հիման վրա որոշվում է այն մասնակիցը, որն առաջարկել է լավագույն տեխնիկական և ֆինանսական պայմանները: Մրցույթի արդյունքներով ընտրված աուդիտորական կազմակերպությունն առաջարկվում է Խորհրդի կողմից Բաժնետերերի ընդհանուր ժողովին հաստատման համար: 2015 թվականին Բանկի արտաքին աուդիտոր է հաստատվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊ

Չինական մեծ պարիսպը մարդկության երբևէ կառուցած ամենաձավալուն, երկար ու վանգվածեղ կառույցներից մեկն է: Պարիսպը պաշտպանում էր չինական քաղաքակրթությունը հարձակումներից, մասնատումից ու քոչվոր բարբարոսների հետ միաձուլումից:



ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի հիմնական բաժնետերերի իրավունքների մեջ ներառվում է շահութաբաժինների տեսքով Բանկի զուտ շահույթից բաժնեմաս ստանալու իրավունքը: Շահութաբաժնային քաղաքականությունն ուղղված է շահութաբաժնային չափերի որոշման ժամանակ ապահովելու Բանկի և բաժնետերերի շահերի հավասարակշռությունը, ինչպես նաև բարձրացնելու Բանկի ընթացիկ ներդրումային գրավչությունը և ապահովելու իր կապիտալիզացիայի աճը: Շահութաբաժին է հանդիսանում Բանկի շահույթի բաժնեմասը, որը համամասնորեն բաշխված է բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի քանակի և տեսակի միջև: Բանկն իրավունք ունի տարվա ֆինանսական արդյունքներով որոշում ընդունել շահութաբաժինների վճարման մասին ըստ տեղաբաշխված բաժնետոմսերի: Շահութաբաժինների վճարման որոշումն ընդունվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ Բանկի Խորհրդի առաջարկությամբ: Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովը սահմանում է շահութաբաժինների չափը: Բանկի Խորհուրդը կարող է որոշում ընդունել միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ և սահմանել չափը, պայմանները և վճարման կարգը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ

Բանկը հավատարիմ է մնում իր գործունեության մասին բաժնետերերի և պոտենցիալ ներդրողների առավելագույն տեղեկատվական կարիքների հավաստի տեղեկատվությունով բավարարման սկզբունքին, որը կարող է օգտակար լինել ներդրումային և կառավարչական որոշումների ընդունման համար: Բանկը բացահայտում է տեղեկատվությունը տարեկան հաշվետվության ձևով, եռամսյակային հաշվետվություններով, փոխկապակցված անձանց ցուցակներով, էական այլ փաստերի հաղորդագրություններով, որոնք ենթակա են բացահայտման արժեթղթերի շուկայում, արժեթղթերի ազդագրով, տարեկան հաշվապահական հաշվետվություններով և այլ տեղեկություններով, որոնք ենթակա են պարտադիր բացահայտման բաժնետիրական ընկերությունների կողմից: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում այն բանին, որ ցանկացած կարևոր տեղեկատվություն միաժամանակ դառնա հասանելի բոլոր բաժնետերերին և վերլուծաբաններին, հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներին համաձայն: Բանկն իր գործունեությունում ձգտում է պահպանել առավելագույն թափանցիկության մակարդակ և բացահայտում է լայն պրոֆիլի կորպորատիվ տեղեկատվությունը: Պարտադիր հրապարակման ենթակա տվյալները Բանկն իրականացնում է կայքերում՝ [www.unibank.am](http://www.unibank.am) և [www.corp.unibank.am](http://www.corp.unibank.am):

## ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ

### ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

«Յունիբանկ» ԲԲԸ-ն առաջին ընկերությունն է Հայաստանում, որը բորսայում նախնական հրապարակային առաջարկի (IPO) միջոցով իրականացրեց բաժնետոմսերի տեղաբաշխում: Կնքվեց 186 գործարք, որոնց ընթացքում ընդհանուր առմամբ տեղաբաշխվեց 2,454,668,330 ՀՀ դրամ գումարի 10,672,471 հատ հասարակ անվանական բաժնետոմս: Սովորական լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում, Յունիբանկ ԲԲԸ-ն համալրեց կանոնադրական կապիտալը մոտ 1,1 մլրդ ՀՀ դրամով՝ հասցնելով այն 14,1 մլրդ ՀՀ դրամի: Բանկը տեղաբաշխման էր ներկայացրել 100 ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնետոմսեր, տեղաբաշխման ընթացքում բաժնետոմսի գինը կազմեց 230 ՀՀ դրամ: Որպես բանկի բաժնետոմսերի մարքեթ-մեյկեր (շուկա ստեղծող) հանդես է գալիս «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն:

Յունիբանկ ԲԲԸ-ի բաժնետոմսերը ցուցակվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ի երկրորդային (B) հարթակում, որը հնարավորություն տվեց սկսել բանկի բաժնետոմսերի շրջանառությունը բորսայում և կնքել Ռեպո գործարքներ: Այս պահի դրությամբ բաժնետոմսերի ազատ շրջանառվող մասը կազմում է նվազագույնը 10%:

Բաժնետերերի, ներդրողների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ աշխատանքների զարգացումը դարձավ 2015 թվականի Բանկի հիմնական առաջնահերթություններից մեկը:

Ներդրողների հետ փոխգործակցությունը մշտապես իրականացվում է Բանկի ղեկավարության և Բանկի այդ ուղղության համար պատասխանատու ստորաբաժանման՝ Ներդրողների հետ հարաբերությունների վարչության կողմից:

Ներդրողների հետ արդյունավետ փոխգործակցության համար 2015 թվականին իրականացվեցին մի

շարք լայնածավալ միջոցառումներ: Բանկի ղեկավարությունը ակտիվ կերպով մասնակցում է ոչ նշանակալի մասնակցություն ունեցող բաժնետերերի հետ հանդիպումներին, որոնց շրջանակներում բաժնետերերին տրամադրվում են մանրամասն տեղեկատվություն Բանկի ֆինանսական վիճակի, շուկայում զբաղեցրած դիրքի, Բանկի համապատասխան ռազմավարության մշակման և կանխատեսվող ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ: Բանկի առաջնահերթ խնդիրներից է նաև ներդրողների և անալիտիկ խմբի փոխգործակցությունը, որի նպատակն է առավելագույն կերպով տեղեկացնել բաժնետերերին Բանկի գործունեության արդյունքների և այն գործոնների և պայմանների վերաբերյալ, որոնք կարող են ազդել Բանկի գործունեության վրա:

2015 թվականի ընթացքում Բանկը նախաձեռնեց նաև «Ժողովրդական բանկ» հեռուստածրագիրը, որն ուղղված է բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը և հաճախորդներին բանկային ծառայությունների մանրամասն ներկայացմանը:

Բանկը շարունակում է նաև հեռահար հաղորդակցության զարգացումը Բանկի բաժնետերերի և ներդրողների հետ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ինտերնետային ռեսուրսների հետագա զարգացմանը՝ ընդլայնելով Բանկի ներկայությունը սոցիալական ցանցերում (Facebook, Twitter, LinkedIn) և հետամուտ լինելով հետադարձ կապի և Տեղեկատվի միջոցով ստացված հարցումների արագ արձագանքմանը:

Յունիբանկն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում բաժնետերերի և ներդրողների հետ հետադարձ կապի ապահովմանը: Մանրամասն տեղեկություններին կարող եք ծանոթայալ՝ [www.unibank.am](http://www.unibank.am) («Բաժնետերեր և ներդրողներ») և [corp.unibank.am](http://corp.unibank.am) կայքերում:

### ԶՎԱՐԹՆՈՑ

Զվարթնոցի կամ Վաղարշապատի միջնադարյան Ս. Գրիգորի տաճար: Այն կառուցվել է Ներսես 3-րդ Շինող կաթողիկոսի շնորհիվ 641-661 թթ.ին: 1989 թ.-ին -ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային արժեքների ցանկում:

ԲԱԶՄԱԿՈՂՄ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2015թ. Բանկը շարունակել է ակտիվորեն համագործակցել միջազգային կառույցների հետ:

Մասնավորապես շարունակվել է Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) և Առևտրի և զարգացման Սև-ծովյան բանկի (BSTDB) հետ համագործակցությունը: Տարվա ընթացքում Բանկը շարունակել է համագործակցությունը նաև Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ՓՄՁ ՉԱԿ-ի հետ:

2015 թվականին Բանկը սկսեց համագործակցությունը նաև Եվրոպական ինվեստիցիոն Բանկի (EIB) հետ, այդ նպատակով մշակվեց նոր վարկատեսակ՝ նախատեսված գյուղատնտեսության, գյուղվերամշակման, զբոսաշրջության և սպասարկման ոլորտներում ՀՀ-ում գործունեություն իրականացնող ձեռնարկությունների ֆինանսավորման համար:

Միջազգային կառույցների հետ համագործակցության շնորհիվ, Բանկը հնարավորություն է ստանում ընդլայնելու բիզնես վարկավորման ծրագրերը՝ բարձրացնելով վարկային միջոցների հասանելիության մակարդակն ավելի մեծ թվով ձեռնարկատերերի համար:

Տարեվերջին նախնական բանակցային գործընթաց է սկսվել նաև OPEC-ի, Եվրասիական Չարգացման Բանկի, Ռոսէկսիմբանկ ԲԸ-ի և Frankfurt Business School Financial Services GmbH գերմանական մասնավոր ֆոնդի հետ:

Տարվա ընթացքում Խորհրդի և Վարչության անդամները ակտիվ մասնակցություն ունեցան մի շարք ներդրումային համաժողովներում, սեմինարներում և road-show-ներում: Մասնավորապես, Յունիբանկը ներկայացված է եղել Ասիական Բանկի կողմից կազմակերպված ամենամյա ICC Banking Commission-ում Սինգապուրում:

## ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԴԻՏ

Բանկի ներքին հսկողությունը և աուդիտը գործում են միջազգային լավագույն պրակտիկաների հիման վրա և ամբողջովին համապատասխանում են ինչպես Հայաստանի օրենսդրության պահանջներին, այնպես էլ ՀՀ Կենտրոնական բանկի իրավական և նորմատիվ ակտերին:

### Ներքին հսկողություն

Բանկի ներքին հսկողության համակարգը ապահովում է՝

- Բանկի գործունեության արդյունավետություն,
- ակտիվների և պասսիվների կառավարման արդյունավետություն /ներառյալ՝ ակտիվների պահպանվածություն/ և ռիսկերի կառավարում,
- տեղեկատվական անվտանգություն,
- ֆինանսական և կառավարչական տեղեկատվության և հաշվետվության ճշգրտություն, ամբողջականություն և ժամանակին տրամադրումը,
- օրենսդրության, նորմատիվ ակտերի, կանոնների և ստանդարտների պահանջների պահպանում:

### Բանկի ներքին հսկողության և աուդիտի հիմնախնդիրներն են՝

- Ներքին հսկողության համակարգերի արդյունավետության, ռիսկերի կառավարման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության, բիզնես-գործընթացների, ստորաբաժանումների և աշխատակիցների արդյունավետության, ինչպես նաև իրականացվող գործառույթների և գործարքների արդյունավետության անկախ գնահատում,
- Հիմնական ռիսկային ոլորտների և ստուգող մեխանիզմների մոնիտորինգ, ներքին հսկողության համակարգի թերությունները, նոր ռիսկերը բացահայտելու նպատակով, ինչպես նաև ռիսկային ղեկավարի մասին նախազգուշացման համար կանխիչ մեխանիզմների ստեղծումը,
- Համակարգերի, գործընթացների, ընթացակարգերի, գործարքների և ստորաբաժանումների ու աշխատակիցների գործունեության արդյունավետության աճի նպատակով խորհրդատվության մշակում,
- Արտաքին վերահսկման մարմինների և արտաքին

աուդիտորների արդյունավետ փոխգործողության կազմակերպում:

### Բանկի ներքին հսկողության մարմինների համակարգը ներառում է՝

- Բանկի կառավարման մարմիններ /բաժնետերերի Ընդհանուր ժողով, Բանկի Խորհուրդ, Բանկի Վարչություն/,
- Մասնաձյուղերի ղեկավարներ /իրենց տեղակալները/, գլխավոր հաշվապահներ կամ մասնաձյուղերի օպերացիոն մենեջերներ,
- Բանկի կառուցվածքային ստորաբաժանումներ /պատասխանատու աշխատակիցները/, ովքեր իրականացնում են ներքին հսկողություն:

## ԱՌԴԻՏԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ներքին հսկողության համակարգի պատշաճ գործունեության համար պատասխանատվություն է կրում Բանկի Խորհուրդը: Լայնածավալ վերլուծության և ներքին վերահսկման համակարգի արդյունավետությունը պահպանելու համար Խորհրդի կազմում գործում է Աուդիտ կոմիտեն:

Աուդիտ կոմիտեի աշխատանքների հիմնական ուղղություններն են՝

- Արտաքին աուդիտի աշխատանքի վերլուծությունը, արտաքին աուդիտորի եզրակացության և նրա հանձնարարականների գնահատումը իրականացված աուդիտի գործընթացների շրջանակներում
- Բանկի զարգացման ռազմավարական հարցերի և ռիսկերի կառավարման գնահատում,
- Բանկի ներքին աուդիտի գործունեության հետ կապված հարցերի նախնական ուսումնասիրում /ներքին աուդիտի աշխատանքային ծրագրի վերլուծություն, ղեկավարի նշանակում և տվյալ ստորաբաժանման կանոնակարգի հաստատում/ և ներքին վերահսկողության համակարգի կազմակերպում,
- Ներքին աուդիտի հաշվետվությունների և առաջարկությունների քննարկում Բանկի բացահայտված խախտումների և անհամապատասխանությունների վերաբերյալ:

## ՆԵՐՔԻՆ ԱՌԴԻՏ

Աշխատանքի արդյունավետության ապահովման նպատակով կառավարման մարմիններին աջակցություն ցուցաբերելու համար Բանկում գործում է Ներքին աուդիտը: Ներքին աուդիտ իրականացնում է ներքին հսկողության համակարգի մոնիտորինգ, աուդիտորական ստուգումներ, ինչպես նաև տրամադրում է անկախ հանձնարարականներ բանկային գործունեության բարելավման համար: Ներքին աուդիտը հանդիսանում է Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում և ուղղակիորեն հաշվետու է Բանկի Խորհրդին: Բանկի Խորհուրդը հաստատում է Ներքին Աուդիտի աշխատանքային ծրագրերը, վերահսկում է դրանց կատարումը, ուսումնասիրում է Ներքին աուդիտի հաշվետվությունները աուդիտորական ստուգումների և ներքին հսկողության համակարգի մոնիտորինգի արդյունքների, ինչպես նաև հայտնաբերված թերությունների վերացմանն ուղղված Ներքին աուդիտի հանձնարարականների կատարման վերաբերյալ:

### Ներքին աուդիտի իրավասություններն են՝

- Ներքին հսկողության համակարգի արդյունավետության ստուգում և գնահատում,
- Բանկային ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության ստուգում,
- ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև կարգավորող և վերահսկող մարմինների կարգավորող իրավական ակտերին համապատասխանության ստուգում,
- Հաշվապահական հաշվառման հաշվետվությունների արժանահավատության, ամբողջականության, օբյեկտիվության և ներկայացման ժամկետների համապատասխանության ստուգում:

Ներքին աուդիտը ներքին հսկողության համակարգի, ինչպես նաև արտաքին աուդիտի ստուգման ժամանակահատվածում Ներքին աուդիտի կողմից արձանագրված հիմնական թերությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման նպատակով համագործակցում է Աուդիտի կոմիտեի, Բանկի արտաքին աուդիտի, և ՀՀ Կենտրոնական Բանկի հետ:



# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

## ԴԵ ՖԱՆՍԻ ԿԱՄԱՐ

Մոնումենտալ ճարտարապետության գլուխգործոցը նվիրված է մարդասիրական գաղափարներին: Կամարը կառուցվել է Փարիզում և ամբողջովին պատված է սպիտակ մարմարի թիթեղներով:

## ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի կադրային քաղաքականությունն ուղղված է անձնակազմի մանրակրկիտ ընտրությանը և ուսուցմանը, բարձր որակավորում ունեցող կադրային պոտենցիալի ձևավորմանը, որի շնորհիվ հնարավոր է ապահովել ծրագրված արդյունքները: Տվյալ քաղաքականությունն իրականացվում է Բանկի կորպորատիվ շահերի շրջանակներում՝ առավել փորձառու մասնագետների ներգրավման, նախաձեռնող աշխատակիցների խրախուսման և առաջխաղացման միջոցով: Հատուկ ուշադրություն է հատկացվում պրոֆեսիոնալ մակարդակի աճին և օպտիմալ վարչակազմակերպչական կառուցվածքի ձևավորմանը:

Ընտրության, թեստավորման և հարցազրույցների ընթացքում առանձնացվում են պատասխանատու, առաջադեմ և նպատակասլաց մասնագետներ, որոնք կհսում են Բանկի արժեքները և պատրաստ են դրանք զարգացնել: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և որակավորման մակարդակի որոշման համար Բանկը պարբերաբար անցկացնում է անձնակազմի ատեստավորում և ռոտացիաներ:

2015 թվականին կատարելագործվել են բոլոր բիզնես ուղղությունների մոտիվացիոն համակարգերը, ինչպես նաև սպասարկող անձնակազմի համար ներդրվել է գրեյդինգի նոր համակարգ: Բանկի անձնակազմի մոտիվացիայի և լոյալության բարձրացման նպատակով կազմակերպվել են կորպորատիվ միջոցառումներ և արտագնա աշխատանքային հանդիպումներ: Վերապատրաստումներն ապահովվում են ինչպես արտաքին կազմակերպությունների կողմից, այնպես էլ ներքին ուժերով: Քննարկումներով և նորարարական մոտեցումներով լի ինտերակտիվ դասընթացներ են կազմակերպվել Բանկի ղեկավար անձնակազմի համար՝ նախագծերի կառավարման, բիզնեսի զարգացման և մենեջմենթի ոլորտներում:

Կատարելագործվել է նաև կորպորատիվ կառավարման համակարգը, մասնավորապես Բանկում իրականացվում է վերահսկման գործառույթների, կառուցվածքային ստորաբաժանումների պարտականությունների հստակ տարանջատում, ամրապնդվում են ներքին վերահսկողության գործառույթները, ապահովվում է հասարակայնության հետ կապը և տեղեկատվության թափանցիկությունը:

2015 թվականի տարեվերջին Բանկի անձնակազմի թվաքանակը կազմել է 776:



Unibank Privé

Մենք տիրապետում ենք անհատական կապիտալի կառավարման արվեստին: Յունիբանկի հետ Ձեր բարեկեցությունն ապահով պաշտպանված է ֆինանսական ցանկացած ճնշումից: Մենք ապահովում ենք բացառիկ մոտեցում, անհատական սպասարկում և առավելագույնս հնարավոր գաղտնիություն:

# ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆ



## ՄԵՐ ԹԻՄԸ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ



**ԳԱԳԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ**  
Խորհրդի նախագահ



**ԳԵՈՐԳԻ ՊԻՍԿՈՎ**  
Խորհրդի անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի նախագահ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ, ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդին կից Միջտարածաշրջանային բանկային խորհրդի անդամ, Ռուսաստանի բանկերի միության խորհրդի անդամ, Դրամական փոխանցումների միջազգային միության (IAMTN) նախագահ, «Национальный Банковский Журнал» ամսագրի դիտող խորհրդի անդամ:

Գագիկ Չաքարյանը տարբեր տարիներին արժանացել է ֆինանսական աշխարհի մի շարք առաջատար մրցանակների, այդ թվում՝ «Լավագույն բանկիր» տիտղոսին 2005 և 2007 թվականներին: 2006 թվականին «Բիզնեսի սոցիալական պատասխանատվություն» անվանակարգում ձանաչվել է «Տարվա մարդ», իսկ 2007 թվականին բանկի արդյունավետ կառավարման համար դարձել է ՌԴ Ազգային բանկային մրցանակաբաշխության մրցանակակիր: Ռուսաստանում կայացած «Տարվա բանկ» ամենամյա մրցանակաբաշխությանը բանկային բիզնեսում ներդրած ավանդի համար ձանաչվել է «Տարվա բանկիր - 2013»:

Պարգևատրվել է Հայ եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով՝ ի գնահատություն ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեության: 2015 թվականին Գագիկ Չաքարյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի անդամ, «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ՍՊԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ, Ֆինանսական պլանավորման ինստիտուտի հիմնադիր և նախագահ: «Բանկային ոլորտում տարվա մենեջեր 2003», «Ֆինանսական օլիմպ 2009» մրցանակների դափնեկիր:



**ՀՐԱՀԱՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**  
Խորհրդի անդամ

«Տրանսստրոյբանկ»-ի Տնօրենների Խորհրդի նախագահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի աշխատանքային մեծ փորձ բանկային համակարգում: Պարգևատրվել է Ռուսաստանի բանկերի միության պատվոգրով՝ ռուսաստանյան բանկային համակարգում ունեցած ավանդի և բանկի հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ:



**ԷԴՈՒԱՐԴ ԶԱՄԱՆՅԱՆ**  
Խորհրդի անդամ

«Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների Խորհրդի անդամ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ մի շարք խոշոր ֆինանսական հաստատություններում:



**ԱՐԱՐԱՏ ԴՈՒԿԱՍՅԱՆ**  
Խորհրդի անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ Հայաստանի, Ուկրաինայի և Մալթայի մի շարք խոշոր բանկերում: 2009-2011 թվականներին ղեկավարել է Հայաստանի բանկերի միությունը:

**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ  
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**



**ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ**  
Վարչության նախագահ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության նախագահ, «Յունիլիզինգ» ընկերության բաժնետեր և Խորհրդի նախագահ, «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ, Հայաստանի բանկերի միության անդամ և ACRA վարկային բյուրոյի Խորհրդի անդամ: Բանկային համակարգում աշխատանքային փորձը 1994 թվականից: Մասնակցել է Համաշխարհային բանկի, Union Bank of Switzerland (UBS), TACIS ծրագրի և այլ միջազգային ֆինանսական կառույցների կողմից իրականացված մի շարք միջազգային ծրագրերին: 1995 թվականին ավարտել է Վիեննայի միացյալ ինստիտուտը (Շուկայական տնտեսության և ֆինանսական վերլուծության դասընթաց):



**ԶԱՔԱՐ ԳՈՅԱԶՅԱՆ**

Վարչության նախագահի առաջին տեղակալ- ռիսկերի կառավարման տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ: Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 20 տարի: Մասնակցել է Արժութային միջազգային հիմնադրամի, Վիեննայի միացյալ ինստիտուտի, Ֆրանսիայի, Թայլանդի բանկերի և այլ միջազգային ֆինանսական կառույցների կողմից կազմակերպված մի շարք խոշոր կրթական և խորհրդատվական ծրագրերին:



**ՕՎՍԱՆՆԱ ԱՂԱՔԵԼՅԱՆ**

Վարչության նախագահի տեղակալ - Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետքերման գծով տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ, «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի և «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ: ՀՀ բանկային համակարգում ակտիվ և արդյունավետ աշխատանքի համար պարզևատրվել է Հայաստանի բանկերի միության պատվոգրով:



**ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈՒԲՅԱՆ**

Վարչության նախագահի տեղակալ-Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ: Աշխատում է Յունիբանկում 2004 թվականից:



**ԳՈՒՐԳԵՆ ԴՈՒԿԱՍՅԱՆ**

Վարչության նախագահի տեղակալ -Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ Մասնակցել է որակավորման բարձրացման մի շարք ծրագրերի, այդ թվում՝ USAID-ի և KfW բանկի:



**ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ, «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ: Տեխնիկական գիտությունների թեկնածու: Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 20 տարի: Մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի հաշվապահական հաշվառման և հարկային օրենսդրության գծով:



**ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Վարչության նախագահի տեղակալ -Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ Տնտեսագիտական գիտությունների թեկնածու: Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 10 տարի:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2015Թ.  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) ղեկավարությունը պատասխանատու է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները միջազգային ստանդարտներին համապատասխան կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանել է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար, Բանկի գործունեության անընդհատության ապահովման կարողությունը գնահատելու համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է Բանկի ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար, ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար, Բանկի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:


2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2016թ. ապրիլի 28-ին:

Ստորագրված է  
Բանկի ղեկավարության անունից

Վարդան Աթայան  
Վարչության նախագահ



Գոհար Գրիգորյան  
Գլխավոր Հաշվապահ



8 ապրիլի 2016թ.  
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
**31 դեկտեմբերի 2015թ.**  
Անկախ աուդիտորի եկրակացություն



**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**  
ՀՀ, ք. Երևան 0012  
Վաղարշյան 8/1  
Հ. + 374 10 260 964  
Ֆ. + 374 10 260 961

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
բաժնետերերին և խորհրդին.

Մեր կողմից իրականացվել է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ (այսուհետ՝ «Բանկ») կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*  
Բանկի ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվություն*

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար:

Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտ, Հարկեր, Խորհրդատվություն  
Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի անդամ

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:


**Հանգամանքների լուսարանում**

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 34-ի վրա: Բանկի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Բանկի գործունեության անընդհատության սկզբունքից ելնելով: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2014թ. որոշում է կայացրել բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո 30,000,000 հազար ՀՀ դրամ: Բանկի բաժնետերերի և ղեկավարության եավաստիացմամբ նշված պահանջի իրականացումը Բանկը կապահովվի կանոնադրական կապիտալի համալրման միջոցով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Գագիկ Գյուլբուդադյան  
Տնօրեն բաժնետեր



Զարուհի Ղարիբյան  
Աուդիտի ղեկավար



Գրանք Թորնթոն ՓԲԸ  
8 ապրիլի 2016թ.  
ք. Երևան



**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	19,714,397	19,316,864
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(13,431,362)	(12,025,942)
<b>Զուտ տոկոսային եկամուտներ</b>		<b>6,283,035</b>	<b>7,290,922</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	1,334,902	1,455,759
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(257,701)	(287,433)
<b>Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ</b>		<b>1,077,201</b>	<b>1,168,326</b>
Զուտ առևտրային եկամուտ	8	677,989	746,151
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ վնաս		-	(855)
Այլ եկամուտներ	9	1,383,757	1,645,630
Արժեզրկման ծախս	10	(2,398,395)	(4,106,633)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(3,070,810)	(3,272,711)
Հիմնական միջոցների մաշվածություն	19	(412,952)	(377,221)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	20	(80,796)	(73,084)
Այլ ծախսեր	12	(2,912,720)	(2,393,969)
<b>Շահույթ մինչև հարկում</b>		<b>546,309</b>	<b>626,556</b>
Շահութահարկի գծով ծախս	13	(187,828)	(94,081)
<b>Տարվա շահույթ</b>		<b>358,481</b>	<b>532,475</b>
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>			
Հողվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում		45,782	-
Հիմնական միջոցների վերագնահատում		(9,157)	-
<b>Չվերադասակարգվող հողվածներին վերաբերող շահութահարկ</b>		<b>36,625</b>	<b>-</b>
Հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս		(468,167)	(578,132)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ վնաս		-	871
Վերադասակարգվող հողվածներին վերաբերող շահութահարկ		93,633	115,452
		<b>(374,534)</b>	<b>(461,809)</b>
<b>Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո</b>		<b>(337,909)</b>	<b>(461,809)</b>
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		<b>20,572</b>	<b>70,666</b>
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ	14	<b>0.00157</b>	<b>-</b>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	26,012,823	34,036,384
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	1,245,854	882,221
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	17	110,181,548	118,960,394
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	18	4,411,861	31,923
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	26	4,136,760	4,984,447
Հիմնական միջոցներ	19	5,165,342	5,142,456
Ոչ նյութական ակտիվներ	20	1,314,048	1,254,782
Կանխավճար շահութահարկի գծով		284,081	382,262
Այլ ակտիվներ	21	5,387,543	4,583,677
<b>Ընդամենը՝ ակտիվներ</b>		<b>158,139,860</b>	<b>170,258,546</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	22,255,512	32,567,529
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	104,170,724	102,069,829
Փոխառություններ	24	7,511,491	13,341,038
Հետաձգված հարկային պարտավորություն	13	731,041	725,839
Այլ պարտավորություններ	25	762,000	1,117,462
<b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>		<b>135,430,768</b>	<b>149,821,697</b>
<b>Սեփական կապիտալ</b>			
Բաժնետիրական կապիտալ	27	14,167,947	13,100,700
Եմիսիոն եկամուտ		1,387,422	-
Գլխավոր պահուստ		421,851	370,137
Այլ պահուստներ		(492,684)	(154,775)
Զբաղիված շահույթ		7,224,556	7,120,787
<b>Ընդամենը՝ սեփական կապիտալ</b>		<b>22,709,092</b>	<b>20,436,849</b>
<b>Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<b>158,139,860</b>	<b>170,258,546</b>

Վարդան ԱՐԹՅԱՆ  
Վարչության նախագահ



Գոհար ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Գլխավոր հաշվապահ

*Handwritten signature in blue ink.*

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Եմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստներ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստներ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
<b>Հաշվեկշիռը 01. 2014թ. 1-ի դրությամբ</b>	13,100,700	1,387,422	370,137	(77,377)	381,411	6,972,432	20,750,303
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(384,120)	(384,120)
Սեփականատերերի հետ գործարքներ	-	-	-	-	-	(384,120)	(384,120)
Տարվա շահույթ	-	-	-	-	-	532,475	532,475
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-	-	-
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	52,148	-	(52,148)
Իրական արժեքի փոփոխությունից	-	-	-	(578,132)	-	-	(578,132)
չվաստակված զուտ վնաս	-	-	-	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆին. արդյունքին փոխանցված զուտ վնաս	-	-	-	871	-	-	871
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	115,452	-	-	115,452
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(468,167)	-	532,475	70,666
Հաշվեկշիռը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,100,700	-	370,137	(539,186)	384,411	7,120,787	20,436,849
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,067,247	1,387,422	-	-	-	-	2,454,669
Հատկացում պահուստին	-	-	51,714	-	-	(51,714)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(202,998)	(202,998)
Սեփականատերերի հետ գործարքներ	1,067,247	1,387,422	51,714	-	-	(254,712)	2,251,671
Տարվա շահույթ	-	-	-	-	-	358,481	358,481
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>	-	-	-	-	45,782	-	45,782
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	-	-	-
Իրական արժեքի փոփոխությունից	-	-	-	(468,167)	-	-	(468,167)
չվաստակված զուտ վնաս	-	-	-	-	-	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	93,633	(9,157)	-	84,476
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(374,534)	(36,625)	358,481	20,572
Հաշվեկշիռը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,167,947	1,387,422	421,851	(913,720)	(421,036)	7,224,556	22,709,092

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	546,309	626,556
ճշգրտումներ		
Արժեզրկման ծախս	2,398,395	4,106,633
Բռնագանձված գույքի արժեզրկումից և իրացումից կորուստներ	223,174	30,643
Հիմնական միջոցների արժեքի վերականգնում	(103,881)	
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	493,748	450,305
Հիմնական միջոցների օտարումից վնաս	17,021	15,763
Ստացվելիք տոկոսներ	(2,280,884)	1,252,651
Վճարվելիք տոկոսներ	495,761	(118,376)
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	(179,415)	790,847)
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	<b>1,610,228</b>	<b>5,573,328</b>
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(320,892)	490,042
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	9,379,240	3,741,696
Այլ ակտիվներ	(623,137)	(713,108)
<i>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(826,458)	912,909
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	1,490,851	(10,366,793)
Այլ պարտավորություններ	(62,136)	115,695
<b>Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը</b>	<b>10,647,696</b>	<b>(246,231)</b>
Վճարված շահութահարկ	31	96,056)
<b>Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>10,647,727</b>	<b>(342,287)</b>

<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(3,938,810)	(175,093)
Հիմնական միջոցների առք	(375,118)	(1,284,858)
Հիմնական միջոցների վաճառք	71,922	45,973
Ոչ նյութական ակտիվների առք	(140,062)	(382,650)
	<b>(4,382,068)</b>	<b>(1,796,628)</b>
<b>Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>		
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	2,454,669	-
Շահաբաժինների վճարում	(500,321)	(47,621)
Ֆինանս. կազմակերպ. վարկերի ստացում/(մարում)	(9,654,080)	27,344,275
Այլ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների մարում	(6,292,311)	(14,240,248)
<b>Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>(13,992,043)</b>	<b>13,056,406</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)</b>	<b>(7,726,384)</b>	<b>10,917,491</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	34,036,384	21,118,118
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(297,177)	2,000,775
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ (Ծանոթ. 15)	26,012,823	34,036,384
<b>Լրացուցիչ տեղեկատվություն</b>		
Ստացված տոկոսներ	17,765,762	20,569,515
Վճարված տոկոսներ	(12,935,601)	(12,144,318)

## ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն  
Ուրախ կլինենք ներկայացնել Ձեզ առավել մանրամասն տեղեկատվություն մեր գործունեության և ծառայությունների մասին, քննարկել հնարավոր համագործակցության և ներդրումների վերաբերյալ առաջարկները և նշանակել հանդիպում Ձեզ համար հարմար ժամանակ:

- ☑ Տեղեկատվություն հաճախորդների համար  
+ 374 10 59 55 55  
callcenter@unibank.am
- ☑ Տեղեկատվություն բաժնետերերի համար  
Ներդրողների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների զարգացման վարչություն  
+374 10 59 22 59  
ir@unibank.am  
m.hambardzumyan@unibank.am
- ☑ Բանկի աշխատակազմ  
+374 10 59 22 59  
l\_yeghiazaryan@unibank.am
- ☑ Տեղեկատվություն ՁԼՄ-ների համար  
Հասարակայնության հետ կապերի ծառայություն  
+374 10 55 56 86  
khachatryan@unibank.am
- ☑ Բանկի գլխամասային գրասենյակի հասցե՝ 0025, ՀՀ, Երևան, Չարենցի 12, N53, 1-5  
+374 10 59 22 59, +374 10 59 55 55,  
www.unibank.am, corp.unibank.am, prive.unibank.am
- ☑ Առևտրորդին "Գրանթ Թորնթոն" ՓԲԸ  
Հայաստանի Հանրապետություն, 0012, ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան թ., 8/1տ.  
(Երևանի Արաբկիր վարչ. շրջ.)  
Հեռ.՝ +374 10 276544 , +374 10 276569 , +374 10 260964

### Թղթակից բանկեր

DEUTSCHE BANK TRUST COMPANY AMERICAS  
DEUTSCHE BANK AG  
RAIFFEISEN ZENTRALBANK OESTERREICH AG  
RIETUMU BANKA  
UNIASTRUM BANK LTD

CB UNISTREAM  
ALFA BANK  
EUROTRUST BANK  
BANK OF GEORGIA

www.unibank.am